Answer Garden

AnswerGarden-ը մի գործիք է, որը շատ հեշտ է օգտագործել թե՛ սովորողների, և թե՛ դասավանդողների համար: Այն լրացուցիչ գրանցում և լրացուցիչ ջանքեր չի պահանջում: Կիրառության առումով շատ մատչելի է և մասամբ անվճար:

Այն նպատակահարմար է կարճ հարցումներ իրականացնելու համար: Այստեղ հարցերն ունեն սահմանափակում մինչև 40 նիշ: Պատասխանների նիշերի քանակը մենք ենք ընտրում հարցումը պատրաստելիս՝ 20 կամ 40 նիշ: Գործիքը թույլ է տալիս կրկնվող պատասխաններից ֆիքսել և ցուցադրել միայն մեկը:



1. Անհրաժեշտ է կայք մուտք գործել www.answergarden.ch հասցեով,

հարցում ստեղծելու համար սեղմել + կոճակը:



Քայլ 3. Բացված պատուհանի նշված մասում անհրաժեշտ է հարցմանը տալ վերնագիր կամ գրել հարցը և սեղմել **Enter** կոճակը:



Քայլ 3. Նշված դաշտում պետք է գրել Ձեր պատասխանները, յուրաքանչյուր պատասխանից հետո սեղմել **Submit** կոճակը և գրել հաջորդ հարցը:



Քայլ 4. Ներմուծված պատասխանները կհայտնվեն նշված մասում:



Քայլ 5. Պատրաստելուց հետո հարցումը տարածելու համար անհրաժեշտ է սեղմել **Share** կոճակը, կիսվել անմիջապես անհրաժեշտ հարթակներում կամ արտապատկերել հղումը և տարածել:



Քայլ 6. **Export** կոճակի միջոցով կարող եք արդյունքներով կիսվել տարբեր հարթակներում կամ ներբեռնել հարցերը, պատասխանները՝ տարբեր ձևաչափերով:



Քայլ 7. **QR** կոճակը սեղմելով կբացվի **QR code**-ը, որի միջոցով նույնպես կարելի է բացել ստեղծված հարցումը:



Քայլ 8. Կարելի է սահմանել ժամանակահատված, որի ընթացքում հարցումը հասանելի կլինի և այն տեսանելի դարձնելու համար կարող եք օգտվել **Local** գործիքից: